№ 31 Փետրվարի 20 (Մարտի 4) 1881 Փետրվարի 20 (Մարտի 4) № 31

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ: Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

[illegible] դիմում են ուղղակի

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօնի օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մանկական թատրոն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի [illegible]. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դաւիթ բէկ.

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Մեր հասարակութիւնը ամեն բանի մէջ ծայրայեղութիւն է սիրում: Առնենք օրինակի համար թատրոնի գործը:

Մի ժամանակ մեր հասարակութիւնը անտարբերական էր համարում թատրոնը առհասարակ, չէր յաճախում թատրոնական ներկայացումները, իսկ այժմ այն ծայրայեղութեանն հասաւ, որ հայոց և վրաց թատրոնական ներկայացումների ժամանակ դուք շատ անգամ կը տեսնէք լօժաներում, բազկաթոռներում և աթոռներում ծնողներին իրանց երեխաների հետ: Նրանք չեն մտածում այն բանի վրա արդեօք այն պիէսան, որի ներկայացմանը նրանք բերում են իրանց զաւակներին՝ բարոյական է, թէ բարոյական չէ մանուկների համար, կարող է կրթողական թէ փչացնող ազդեցութիւն ունենալ երեխաների վրա:

Ամեն տեղ հասկացել են արդէն, որ ինչպէս մանկական գրքերի բովանդակութիւնը պէտք է տարբերվի հասակաւոր մարդկանց ընթերցանութիւնից, այնպէս էլ մանկական թատրոնական ռեպերտուարը պէտք է տարբերվի սովորական թատրոնական ռեպերտուարից: Բայց մեզանում այդ ճշմարտութիւնը դեռ չեն հասկացել և շատ անգամ դուք կը տեսնէք որ հայ և վրացի ընտանիքները տանում են իրանց հետ իրանց երեխաներին այնպիսի թատրոնական ներկայացումներին, որոնք տրվում են միմիայն հասակ առածների համար:

Այդ պատճառով չէ կարելի չը համակրել հայոց թատրոնական կօմիտէտի այս օրերս արած փորձին մանկական ներկայացումներ տալու: Պիէսաների ընտրութիւնն էլ վատ չէր:

Վերջերս մենք կարդացինք ռուս լրագիրներում որ Մոսկվայում, Պուշկինի արձանի մօտ եղած թատրոնը շաբաթը մի անգամ տալիս է դպրոցական երիտասարդութեան համար ներկայացումներ և այն օր թատրոնի կառավարիչ տոմսեր ձրի է ուղարկում մի քանի տասնեակներ Մոսկվայի այս և այլ թէ իգական և թէ արական դպրոցներին: Այդ տեսակ ներկայացումների ռեպերտուարը, ինչպէս ասեցինք, պէտք է բոլորովին տարբերվի սովորական ներկայացումների ռեպերտուարից և պէտք է կրթողական ազդեցութիւն ունենայ պատանիների համար:

Նոյնպէս մանկական թատրոնը պէտք է կազմվի այնպիսի ռեպերտուարից, որ մատչելի լինի մանուկներին, ինչպէս մատչելի են լինում մանուկներին մանկական գրքերը՝ առակներ, թեթև, զուարճալի բարոյական ոտանաւորներ, բարոյական պատմուածներ: Պատանիների համար ռեպերտուարը կարող է կազմված լինել այն պիէսաներից, որոնց հետ տեսականապէս նրանք ծանօթանում են գրականութեան պատմութեան դասերից: Մոսկվայի վերև յիշված թատրոնում աշակերտների համար տրվող ներկայացումները բաղկացած են լինում գլխաւորապէս ռուս կլասիկական գրողների պիէսաներից, Ֆօն-Վիզինի, Գրիբոեդովի և այլ սրանց նման հեղինակութիւններից:

Եթէ թատրոնը կրթարան է, եթէ նա նոյն դերը պէտք է խաղայ հասարակութեան մէջ, որ խաղում է գրականութիւնը, եթէ թատրոնը դպրոց է հասակ առածների համար, նա կարող է կրթական ազդեցութիւն ունենալ և նորահաս սերունդի վրա:

Բայց այն ժամանակ մանկահասակ հանդիսականների համար ռեպերտուարը պէտք է բոլորովին տարբերվի այն ռեպերտուարից, որ նշանակված է հասակ առածների համար:

Ցանկալի է որ մեր հայոց և վրաց բեմերը այդ ճշմարտութիւնը կատարելապէս հասկանային և այդ ուղղութեամբ տանէին իրանց գործը, ժամանակ առ ժամանակ ներկայացումներ տալով յատուկ մանուկների, կամ գոնէ երկու սեռի պատանիների համար:

Գ. Ա.

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

Դ.

Դրսից լսելի եղաւ պարկապզուկի (*) միօրինակ հնչիւնները, որոնց ներդաշնակում էր աշուղի տխուր երգը.

«Աղջիկ, աղջիկ, սիրուն աղջիկ,
«Թէ հեռ չը տաս դու մի պաչիկ,
«Ես պարտիզին գանգատ կանեմ,
«Սրտիս ցաւը նրան կը յայտնեմ.

«Աղջիկ, աղջիկ, սիրուն աղջիկ
«Թէ չը դառնաս դու իմ կնիկ,
«Ես պարտիզին գանգատ կանեմ,
«Ես մեր գիւղից քեզ կը խլեմ.

«Թէ պարտիզն էլ հեռ չը լսէ,
«Իմ գիրկումից հեռ կը ծածկէ.
«Այն ժամանակ ես Աստուծուն
«Կը բողոքեմ [illegible].

Դա տարօրինակ երգ էր, որ իր հոգեկան, սիրոյ զգացմունքների մէջ եւ դառնացած է ընդունում գ ո ր ծ ե ր ը, որ նրանից է սպասում բոլորը, ինչ որ ցանկալի, ինչ որ բարի է իր համար:

Փողփողական բանաստեղծի երգը դուրս կանչեց մանկահասակ աղջիկներին ու հարսներին, որոնք ուրախ խումբով վազեցին հիւրերի առաջ. [illegible] որդիները նոյնպէս դուրս եկան հիւրերին դիմելու համար. Բէկի տան [illegible] բոլոր լցվեցան խառն ամբոխով.

Հիւրերի հետ եկած սպասաւորները, երիտասարդ, ձիաների կերակուրը բառնած ձիաներին, լսում էին այդ աշխոյժ բազմութիւնը, որ իր խառնաձայն բացականչութիւններով հնչեցնում էր գիւղական լռութիւնը. Հիւրերից մէկը, գինու [illegible] ձիաներին բռնած, անդադար ածում էր և մատուցանում էր իր ընկերներին. Նրանք պարում էին, ոմանք թռչկոտում էին, իսկ ոմանք իրանց անհամբերական երգերով խլացնում էին աշուղի նուագածութիւնը, [illegible] ուշադրութիւն դարձնելու նրա պարկապզուկի երաժշտական եղանակին.

Նրանք խմբով մտնելով բէկի [illegible] կանչեցին, գոռում, գոչում էին, որ նա դուրս գայ և իրանց ընդունէ. Բայց բէկը չը շտապեց իր տեղից, ոչ թէ նրանց չը պատուելու համար, այլ այսպիսի այցելութիւնները այնքան յաճախ էին կրկնվում, որ տանտէրը [illegible] մի առանձին նշանակութիւն տալ նրանց քմահաճութեանը.

—Կը կոտրենք դուռը, եթէ դուրս չը գաս,—կը կոտրենք, գոչում էին ամեն կողմից.

Այդ միջոցին Բաղինդար իշխանը ներս մտաւ, և բռնելով բէկի ձեռքից, համարեա զոռով քաշեց նրան, ասելով.

—Լսիր, ինչ որ ասում է քեզ [illegible]. քէֆի ժամանակ մենք ու պատիւը մէկ գին ունեն.—գնանք.

Երբ բէկը յայտնվեցաւ, հիւրերը ընդունեցին նրան ուրախութեան աղաղակներով. Նրանցից մէկը գինով լի մի բաժակը դէմ արեց բէկի բերանին, և բոլորը կենացը խմելուց յետոյ, հրաւիրեց նրանց իր մօտ. Բոլորը խմբով ներս մտան. [illegible] լցվեցաւ խառն բազմութիւնով. Բայց տեղ մնացել էր միայն [illegible], որ այդ միջոցին [illegible] էր. Հիւրերը մի քանի րոպէ կանգնած մնացին, երգեցին, պարեցին, թռչկոտեցին, և յետոյ [illegible] յետոյ, անդատարվեցան տախտի վրա, ուր առաջ նստած էր բէկը. Նրանց հետ եկած սպասաւորները գնացին տան ախոռը ծառաների [illegible], բէկի գինու կարասների բացելը վայելելու համար. Մի քանի րոպէից յետոյ լսվում էին նրանց ուրախութեան խառնաշփոթ աղաղակները.

[illegible] նստում էր այդ անհոգ, զուարճասէր մարդկանց վրա, որոնց նմանը միայն [illegible] կարելի էր տեսնել, երբ թէ աղքատը, թէ հարուստը, երբ թէ իշխանը, թէ [illegible] անհոգ են լինում մի տեսակ զգացմունքի հասցրած ուրախութեան. Նա մտածում էր, մինչ դրանք ազատ լինեն իր հայրենիքի փրկիչները, մինչ դրանցից մի լաւ բան կարելի էր սպասել.

Բացի Բաղինդար իշխանից, մնացած հիւրերը տասն և երեք հոգի էին. Նրանց մէջն էր [illegible] Մխիթար սպարապետը, [illegible], որ պարծենում էր բոլորից իր ծանրութեամբ, որը գործի հետ միացնել գիտէր և [illegible] մտածմունքը, իսկ քաջութեան հետ անվեհեր վճռականութիւնը. Նրանց մէջն էր լօռեցի [illegible], մի չափազանց ինքնահաւան և [illegible] մարդ, որի մէջ [illegible] այն աստիճան [illegible] էր հասել, որ ամեն անգամ, երբ պատահում էր նրան իր [illegible], հաստատված էր, որ այդ մեղքը մի այլ [illegible] չէ կարող [illegible], բայց միայն մի թուրք կամ պարսիկ սպանելով. Նրանց մէջն էին մեծ Գիորգին և փոքր Գիորգին, որոնք, որպէս երկու երկուորեակներ, շատ նման էին միմեանց թէ դէմքով, թէ բնաւորութեամբ, միայն փոքր Գիորգին իր աչքերից մէկը Թիֆլիսում կորցրել էր [illegible] մէջ և միշտ մի առանձին փառքով ցանկանում էր դիտելու, թէ [illegible] էր այդ [illegible] հաղթողը, որ ինչն էլ առիթ ունենար փոխարէնը նրա երկու աչքերը հանելու: Նրանց մէջն էր Երեւանցի, մէկ աչքից կոյր [illegible], մի փոքրիկ [illegible] մարդ, որ իր չափազանց խորամանկութեան համար յայտնի էր մականունով «[illegible]»: Նրանց մէջն էր [illegible] Զաքարիա իշխանը, մի [illegible] աղամարդ, որ միշտ պարծենում էր, թէ իր պապը սովորութիւն ունէր [illegible] ամեն անգամ մի ամբողջ խորոված գառն ուտել: Նրանց մէջ էր [illegible], որը Ղազարի կողմերից էր, և որի մասին պատմում էին, երբ նրան չէ յաջողվում ուրիշից մի բան գողանալ, նա գողանում է իր սեփական ոչխարները, թաքցնում է և միւս օրը [illegible] է բոլոր [illegible] ման գալ, որ ոչխարները նրա մօտ չը տեսնեն և գողութիւնը չը յայտնվի: Նրանց մէջն էր պատանի Մուսին Նախիջևանի կողմերից, որ իր գեղեցիկ աչքերի համար յայտնի էր անունով «Նարգիզ»: Բացի դրանցից, այնտեղ էին [illegible] Թովմէս բէկը և [illegible], որոնց երկսեան էլ [illegible] վիրաւորվում էին, երբ իրանց ընկերները առանց [illegible] կանչում նրանց: Նրանց հետ էր և [illegible] Յարութիւն [illegible], որ [illegible] աւարառութեան, և միշտ ասում էր, երբ ինքը երազում դրանցից մէկին տեսնում է, այն օրը տանից չէ դուրս գալիս, որովհետև գիտէ, որ [illegible] մի չար բանի պիտի հանդիպի: Բացի այդ ամեն կողմերից հաւաքված, փախստական հայերից, նրանց մէջ կային երկու վրացի ազնուականներ, որոնց մէկին կոչում էին Սաւիկօ, իսկ միւսին Դաթիկօ, այս վերջինի մասին պատմվում էր, երբ նա գերի ընկաւ Պարսկաստանում, և երբ պարսիկները ստիպեցին նրան, թէ ինչ կը պահանջէ, որ մահմետականութիւն ընդունէ, նա պահանջեց մի զոյգ [illegible] ([illegible]) միայն.

*) Վրացիք կոչում են ս տ վ ի ր ի.